17649

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ N ԵՔ-ԴՄ- 12

Ք. Երևան

21.10.2021 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի (այսուհետ՝ պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի տնօրենի ժ/պ Հմայակ Ալեքսանյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակի «1115 Երիտասարդության ծրագիր» ծրագրի «11001 Երիտասարդական պետական քաղաքականությանն ուղղված ծրագրեր և միջոցառումներ» միջոցառումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» N 1937-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշումը (այսուհետ՝ որոշումներ), Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 10-ի «Կազմակերպությունների ցանկը հաստատելու մասին» N 1692-Ա/2 հրամանը, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության կողմից դրամաշնորհների հատկացման մրցույթի հանձնաժողովի 24.09.2021թ. N 04/21 արձանագրությունը «Կինոդպրոց առանց սահմանների» ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան և գինը

1.1 Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով կազմակերպությանը հատկացնել 2700.0 հազար (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի, իսկ կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշումներով և սույն պայմանագրով սահմանված կարգով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.

2.1.4. Սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. Իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը.

2.3.2. Կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. Իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4. Իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. Իրականացնել ծրագրի շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում.

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3. Կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Սույն պայմանագրով սահմանված կարգով պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն.

2.4.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.7. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.8. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

2.4.9. Ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.10. Պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարվելու դեպքում, դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

2.4.11. Անհրաժեշտության դեպքում Պայմանագրի նախահաշվով նախատեսված ծախսային ուղղություններում իրականացնել յուրաքանչյուր ծախսային ուղղության գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1. Պայմանագրի արդյունքն ընդունվում է պետական մարմնի և կազմակերպության միջև հանձնման-ընդունման ակտի ստորագրմամբ:

Մինչև պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման համար նախատեսված օրը ներառյալ կազմակերպությունը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով պետական մարմնին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ հանձնման-ընդունման ակտը և հաշվետվությունը:

4.2. Եթե իրականացված միջոցառումը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, պետական մարմինը պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

4.3. Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պետական մարմինը չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպությանը հետ է վերադարձնում հանձնման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը: Սույն կետի կիրառման դեպքում պետական մարմինը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4. Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում պետական մարմինը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը պետական մարմինը armeps էլեկտրոնային համակարգի միջոցով

կազմակերպությանն է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Պայմանագրի 1.1 կետում սահմանված գումարի 80%-ը կատարողին հատկացվում է Պայմանագիրը կնքվելուց հետո, իսկ 20%-ը Պայմանագրի 4.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ 5 բանկային օրվա ընթացքում:

5.2. Համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2021 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Պայմանագրի N 1 հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պետական մարմնի կողմից չընդունվելու, ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3. Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը 2021 թվականի հոկտեմբերի 15-ից 2021 թվականի դեկտեմբերի 15-ն է, իսկ հաշվետվությունների ընդունման ժամկետը՝ մինչև 2021 թ. դեկտեմբերի 15-ը:

7.2. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2021 թվականի հոկտեմբերի 15-ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.2. այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ մրցույթի գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս հաղթող կազմակերպություն ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում սույն կարգի պահանջներին, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պետական մարմինը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում՝ պետական մարմինը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պետական մարմնի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

9.3. Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում

է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

9.4 Կազմակերպության կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական՝ www.escs.am կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Կազմակերպությունը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը սույն կետում նշված կայքում հրապարակվելու օրը պետական մարմինը այն ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

9.5. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.6. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.7. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՏԱՐՈՂ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամ»
Երևան, Վ. Սարգսյան 3	ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5
Կառավարական տուն N 2	Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 2052822119731001, ՀՎՀՀ 2693936
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732	Հեռ. (055) 189-475
Պատվիրատուի ստորագրությունը	afidfoundation@gmail.com
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Կատարողի ստորագրությունը
Վահրամ Գասպարյան	հիմնադրամնի տնօրենի ժ/պ՝
Կ. Տ.	**Հմայակ Ալեքսանյան**
	Կ. Տ.

Հավելված 1
2021թ. հոկտեմբերի 21-ին
կնքված N ԵՔ-ԴՄ 12 պայմանագրի

«Կինոդպրոց առանց սահմանների»
դրամաշնորհային ծրագրի

Ծրագրի նկարագրություն

Ծրագիրը միտված է ՀՀ-ում մշակույթի համաչափ զարգացմանը, մշակութային բարիքների հավասարաչափ բաշխման գործընթացի ապահովմանը, մշակույթի մատչելիության և հասանելիության ապահովմանը:

Ծրագիրը կնպաստի մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ձեռքբերած և այդ գործողություններից ներազդված երիտասարդներին մասնագիտական կողմնորոշման ապահովմանը, ինչպես նաև լրացուցիչ և շարունակական կրթություն ձեռք բերելուն, նրանց ստեղծագործական կարողությունների բացահայտմաննու զարգացմանը:

Կինոդպրոցի նպատակն է՝

- Փոխել հասարակության վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ, որպեսզի հասարակությունը նրանց ընկալի կինոարվեստ ոլորտի լիարժեք աշխատանքային կազմի անդամ,
- Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ռեաբիլիտացիա կինեմատոգրաֆիայի միջոցով,
- Պատրաստել մասնագետներ կինոյի և հեռուստատեսության համար
- Կինոդպրոցը ավարտող հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել աշխատանքով:

Ծրագրի իրականացման կարևոր ռազմավարությունն է բացահայտել Երևանում և ՀՀ մարզերում մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ձեռքբերած և այդ գործողություններից ներազդված երիտասարդների ստեղծագործական ներուժը: Զարգացնել նրանց ստեղծագործական ունակություններն ու շնորհքը, արվեստի և ստեղծարարության հանդեպ հակումները, ձևավորել վաղվա քաղաքացու գեղագիտական ճաշակը, օժանդակել մասնագիտական կողմնորոշման հարցում, ինչպես նաև սովորեցնել օգտվել և ծանոթանալ ժամանակակից արդիական համակարգչային և այլ տեխնիկական ծրագրերի հետ, **հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների զարգացում,ներառականության և հավասարության ապահովում:**

Շատ հասարակություններում հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ կտրվում են մյուսներից՝ ապրելով մեկուսացված և կանգնելով խտրականության առջև: Ծրագրի հետաքրքիր ու բազմաբովանդակ անցկացման միջոցով մենք կվերահաստատենք մեր հանձնառությունը միասին աշխատելու հանուն ավելի լավ աշխարհի, որը կլինի ներառական, հավասար և կայուն բոլորի համար և որտեղ հաշմանդամների իրավունքները լիովին իրացվում են:
Ծրագրի իրականացման աշխատանքային խմբում իրենց պատրաստակամությունն են հայտնել արվեստի ոլորտի շատ ներկայացուցիչներ՝ Հարություն Խաչատրյան, Անետա Երզնկյան, Սուսաննա Հարությունյան, Դավիթ Մաթևոսյան, Միքայել Պողոսյան, Հակոբ Ղազանչյան, Էդգար Բաղդասարյան և այլոք:

Կազմակերպության փորձառությունը

Հիմնադրամի նպատակներն են՝

- Կինեմատոգրաֆիայի ոլորտի ինդուստրիալ զարգացում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի մասնագետների տվյալների բազայի ստեղծում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտում կադրերի պատրաստում և վերապատրաստում,
- Կինոփառատոների և այլ մշակութային միջոցառումների կազմակերպում,
- Կինոփառատոներին և կինոշուկաներին մասնակցության ապահովում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի կազմակերպությունների հետ կապերի ստեղծում,
- Համատեղ ֆիլմարտադրության խթանում,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի նյութատեխնիկական հենքի արդիականացում,
- Կինեմատոգրաֆիա ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավում:
-

Այս նպատակներն իրագործելու համար Հիմնադրամը իրականացնում է՝

- Մշակույթի, կրթության և կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր,
- Կինոժառանգության պահպանմանն ու հանրահռչակմանն ուղղված ծրագրեր,
- Միջոցառումներ կազմակերպելուն և դրանցում մասնակցություն ապահովելուն ուղղված ծրագրեր,
- Ֆիլմարտադրությանը, ֆիլմի տարածմանը (դիստրիբուցիա) և ցուցադրմանը նպաստող ծրագրեր,
- Միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործությանն ուղղված ծրագրեր,
- Օտարերկյա ներդրումներ ներգրավելուն ուղղված ծրագրեր:

Հիմնադրամի շահառուների խմբերն են՝

- Կինեմատոգրաֆիայի ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք,

- Մշակութային և կրթական ծրագրեր իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտում գիտելիքներ ձեռք բերելու և (կամ) գիտելիքները զարգացնելու նպատակ հետապնդող ֆիզիկական անձինք,
- Կինեմատոգրաֆիայի ոլորտի զարգացմանը նպաստող ծրագրեր իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք:

*ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ 2019 թ. հունիսի 20-ից - դեկտմբերի 25-ը Երևանում և ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի մարզերում փորձնական անցկացվեց «Կինոդպրոց առանց սահմանների» հաշմանդամություն ունեցող անձանց համար ծրագիրը: Նախապես պլանավորված վայրերից զատ, ծրագրին մասնակցելու ցանկություն հայտնեցին նաև այլ անհատներ և կազմակերպություններ, ինչի արդյունքում ծրագիրը ընդլայնվեց՝ ընդգրկելով այլ շահառուների: Ծրագրի շահառուների ուսումը մինչ այսօր շարունակվում է հիմնադրամի կողմից ստեղծված ժամանակակից «Innovation Նորարական Կինոդպրոց»-ում՝ հիմնադրամի միջոցներով:

ՀՀ ԿԳՄՍՆ աջակցությամբ 2020թ-2021թ. շարունակվեց «Կինոդպրոց առանց սահմանների» ծրագիրը: Ծրագրին մասնակցել են 300 անձ Երևանից և ՀՀ 10 մարզերից և հատկանշական է,որ նրանցից շատերն հիմնադրամի միջամտությամբ արդեն իսկ աշխատում են տարբեր ոլորտային կազմակերպություններում կամ ներգրավված են հիմնադրամի ընթացիկ նախագծերում:

*Ծրագրի իրականացման համար յուրաքանչյուր տարի միջինը հատկացվել է 1.600.000 ՀՀ դրամ/Պայմանագրերը կցվում են/:

Ծրագրի նպատակը, խնդիրներն ու ակնկալվող արդյունքները

Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն նախադրայլներ ծրագրի մասնակիցներին առնչվելու կինոյի հետաքրքիր աշխարհի հետ: Ծրագրի կարևորագույն բաղադրիչ ներառականությունը հնարավորություն կընձեռի հաշմանդամություն ունեցող անձանց ինքնիրացվելու արվեստի ոլորտում: Կբացահայտվի նրանց ստեղծագործական ներուժը ու ժամանակակից աշխարհում նրանց լիարժեք ինտեգրումը, իսկ հայեցակարգային ծրագրի առանձնահատկությունն է՝ համատեղ ավարտական ֆիլմի նկարահանումը, որպես մասնագիտական կարողությունների ձեռք բերելու արդյունքի դրսևորում: Նախատեսվում է, որ ծրագիրը կլինի շարունակական, տարեցտարի կընդլայնի իր գործողության սահմանները, և երկարաժամկետ հեռանկարում կապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավածությունը կինոոլորտի մասնագետների սերնդափոխության սահուն գործընթացում:

Ծրագիրը կմեկնարկի 2021 թվականի հոկտեմբեի 15-ին և կավարտվի 2021 թվականի դեկտեմբերի 15-ին:

Գործողություններ

Հ/Հ	Գործողություն	Պատասխանատու	Ամիս		
			10	11	12
1	Նախապատրաստական շրջան՝ կինոդպրոցի շահառուների հավաքագրում և դասընթացի մեկնարկ	Ծրագրի համակարգող, դասավանդող	+		
2	Դասընթաց	Դասավանդող	+	+	+
3	Գովազդ սոցիալական հարթակներում	Իրականացնող կազմակերպություն	+	+	+
4	Համատեղ ավարտական ֆիլմի նկարահանում	Դասավանդող, նկարահանող ստեղծագործական անձնակազմ			+
5	Ավարտողների վկայագրերի պատրաստում	Ծրագրի համակարգող			+

Ծրագրի շահառուները և շահագրգիռ կողմերը

Ծրագրի շահառուներն են մարտական գործողությունների ժամանակ հաշմանդամություն ձեռքբերած և այդ գործողություններից ներազդված երիտասարդներ Երևանից և ՀՀ

մարզերից: «Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամը շահագրգիռ կողմերի հետ երկարատև և շարունակական խորհրդատվությունների գործընթաց է հաստատել տարբեր շահագրգիռ կողմերի շրջանում, որն ընդգրկում է ՀԿ-ները, ոլորտի փորձագետները, Ծրագրի պոտենցիալ շահառուները: Ծրագրի նախապատրաստման ընթացքում շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունները կկայանան նաև դեմ-առ-դեմ հանդիպումների միջոցով, շահագրգիռ կողմերի և փորձագետների արժեքավոր աջակցության և մասնակցության: Մասնավորապես, այս Ծրագրի մեջ իրենց արժեքավոր ներդրումը ունի «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոն», «Երիտասարդության Կամք», «Ռեսուրս կենտրոն» կազմակերպությունները:

Ռիսկերի գնահատում

- ✓ Ծրագրի իրականացման ընթացքում հնարավոր են որոշակի գործողությունների ժամկետների երկարաձգումներ՝ պայմանավորված լրացուցիչ աշխատանքներ իրականացնելու հանգամանքով. Այս ռիսկի հաղթահարման ռազմավարության հիմքում պետք է դրվեն մշտադիտարկման և գնահատման, կազմակերպության *կողմից իրականացվող վերլուծությունների արդյունքները, որոնք թույլ կտան հետագայում վերանայել աշխատանքների կատարման ժամկետները, իրականացվող ծրագրերի ընթացքը:*
- ✓ Ռեսուրսների անբավարարություն՝ (մարդկային, ինստիտուցիոնալ կարողություններ, ֆինանսական): Այս ռիսկի հաղթահարման ռազմավարության *հիմնական միջոց պետք է դառնա «պետություն-մասնավոր հատված» համագործակցության շարունակական զարգացումը, միջոցառումների արդյունավետ շարունակական իրականացումը, պետական և ոչ պետական հատվածների միջև համագործակցության շարունակական խթանումը.*
- ✓ Իրականացվող Ծրագրի վերաբերյալ շահագրգիռ հասարակայնության ներգրավումը: Այս ռիսկի հաղթահարման ռազմավարությունը, *որի արդյունքում ակնկալվում է ռիսկի ազդեցության նվազեցում, պետք է հենվի Ծրագրի իրականացմանը հանրային մասնակցայնության ապահովման և Ծրագրի արդյունքների վերաբերյալ հանրության պարբերաբար և ամբողջական իրազեկման վրա:*

Ծրագրի աշխատակազմը

Հիմնադրամի կինոարտադրության դեպորտամենտում ձևավորված է բարձր պրոֆեսիոնալների թիմ, որոնք ամբողջովին տիրապետում են կինոարտադրության ամբողջական ցիկլին Pre-production , Production, Post-production, թիմում առկա են VFX, 3D animation, Color correction, Editor մասնագետներ, որոնք թույլ են տալիս մեր թիմին գործել արագ, որակով և լինել շուկայում մրցակցային:

Հիմնադրամի աշխատակազմը բաղկացած է բացառապես ոլորտի երկարամյա մասնագետներից, որոնք ունեն՝ բավարար գիտելիքներ ոլորտի վերաբերյալ, բավականաչափ փորձառություն կինոարտադրության ոլորտում, այդ թվում՝ միջազգային կինոփառատոններ կազմակերպել, օժտված են ճկունությամբ, մարդանց հետ շփման ժամանակ արագ կողմնորոշվելու ունակությամբ, պատասխանատվության զգացումով: Այս բոլոր հատկություններով օժտված անձինք են ներգրավված լինելու սույն ծրագրի իրականացման աշխատանքներում: Ծրագրի համակարգողը, դասավանդողը, այլ աշխատանքներ իրականացնող կազմակերպությունները պայմանագրով սահմանված պարտականությունների համաձայն իրականացնելու են իրենց աշխատանքը:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	«Կինոդպրոց առանց սահմանների» կրթական ծրագիր						
	անվանումը	բովանդակությունը	Կազմակերպության կողմից կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Միջոցառման իրականացման վերջնաժամկետը	Հաշվետվության ներկայացման կարգն ու ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	«Կինոդպրոց առանց սահմանների» կրթական ծրագիր	Ծրագրի համակարգող	Համակարգելու է ծրագրի ամբողջ ընթացքը:	Ծրագրի ընթացքի անխափան աշխատանքի ապահովում:	Հոկտեմբերի 15-ից դեկտեմբերի 5-ը	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	130000

2.		Դասընթացների կազմակերպում	Ոլորտի 2 առաջատար մասնագետների ներգրավում «Սցենարիստ», «Ռեժիսոր», «Մոնտաժի ռեժիսոր» մասնագիտություններով	Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվեն նախադրայլներ ծրագրի մասնակիցների ն առնչվելու կինոյի հետաքրքիր աշխարհի հետ: Ծրագրի կարևորագույն բաղադրիչ ներառականությունը հնարավորություն կընձեռի հաշմանդամություն ունեցող անձանց ինքնիրացվելու արվեստի ոլորտում	Հոկտեբերի 15-ից դեկտեմբերի 5-ը	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	595200
3.		Մասնակիցներին նոթատետրերով ապահովում	Նոթատետրերի տպագրություն	Ծրագրի ընթացքում անհրաժեշտ պարագաների ապահովում	Հոկտեբերի 31	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	37940
4.		PR և ընդհանուր գովազդային արշավ	Ծրագրի և նրա ընթացքի վերաբերյալ նյութերի տեղադրում և տարածում սոց. ցանցերում	Ծրագրի հանրայնացում, SMM ծառայությունների մատուցում (Facebook, Instagram,)	Հոկտեբերի 15-ից Դեկտեմբերի 5-ը	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	300000
5.		Համատեղ ավարտական ֆիլմի նկարահանում	Կազմակերպիչների կողմից մասնագիտական հարթակի ապահովում (տեխնիկա, մոնտաժային աշխատանքներ, ձայն, լույս)	Համատեղ ավարտական ֆիլմի նկարահանումը, որպես մասնագիտական կարողություններ ի ձեռք բերելու	Նոյեմբերի 10-ից Դեկտեմբերի 5-ը	Բովանդակային և ֆինանսական հաշվետվություն Դեկտեմբերի 15	1.147.860

				արդյունքի դրսևորում			
6.		Ավարտական վկայականների տրամադրում	Ավարտական վկայականների տպագրություն	Մասնագիտական կարությունների գնահատում	Դեկտեմբերի 4	Բովանդակային և ֆինանսկան հաշվետվություն	39.000
7.		Հաշվետվությունների ներկայացում			Դեկտեմբերի 5-15-ը	Դեկտեմբերի 15 Բովանդակային և ֆինանսկան հաշվետվություն Դեկտեմբերի 15	
	Ընդամենը՝ 2.250.000 **Ընդամենը ԱԱՀ՝ 450.000** **Ընդամենը՝ 2.700.000**						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամ»
ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822119731001, ՀՎՀՀ 2693936
Հեռ. (055) 189-475
afidfoundation@gmail.com
Կատարողի ստորագրությունը հիմնադրամնի տնօրենի ժ/պ՝
Հմայակ Ալեքսանյան
Կ. Տ.

21.10.2021թ.ԵԲԴՄ- 12 Հավելված 2
ծածկագրով
դրամաշնորհային մրցույթի հրավերի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Դրամաշնորհառու «Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ
Ծրագրի անուն «Կինոդպրոց առանց սահմանների» կրթական ծրագիր

Հ/Հ	Բյուջեի տողի նկարագրական	Միավոր	Միավորի քանակ	Միավորի արժեք (ՀՀ դրամ)	Պահանջվող գումար (ՀՀ դրամ)	Համաֆինանսավորվող գումարը (ՀՀ դրամ)	Ընդհանուր Պահանջվող և Համաֆինանսավորվող գումարները
Աշխատավարձ							
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ						
1.1	Ծրագրի համակարգող	մարդ	1	130000	130000		130000
Ընդամենը Ա							130000
Բ	Ծրագրային ծախսեր						
2.1	Դասավանդողների վարձատրություն 2 ամսվա համար/8շաբաթ*4օր*3ժամ* 2 դասավանդող	դասաժամ	192	3100	595200		595200
2.2	PR և ընդհանուր գովազդային արշավ՝ SMM ծառայությունների մատուցում (Facebook, Instagram) 2 ամիս	ամիս	2	150000	300000		300000
2.3	Կինոդպրոցի շահառուների ավարտական միասնական տեսաֆիլմի պատրաստում /տևողությունը՝ 20- 28 րոպե/	րոպե	28	40995	1147860		1147860
2.4	Ավարտողների վկայագրերի պատրաստում	հատ	150	260	39000		39000
2.5	Մասնակիցների համար նոթատետրի պատրաստում	հատ	150	252	37940		37940
Ընդամենը Բ							2.250.000
Ընդամենը ԱԱՀ							450.000
Ընդամենը							2.700.000

Դրամաշնորհառու «Արմ Ֆիլմ Ինդուստրի Դևելոպմենտ» մշակութային հիմնադրամ
Ծրագրի անուն «Կինոդպրոց առանց սահմանների» կրթական ծրագիր
Ծրագրի տևողություն 2 ամիս

ՀՀ	Բյուջեի տեսակը	Պահանջվող գումարը (ՀՀ դրամ)	Բյուջեի տողի նկարագրական
	Աշխատավարձ		
Ա1	Ծրագրի աշխատակազմի աշխատավարձ		
1.1	Ծրագրի համակարգող	130.000	Համակարգելու է ծրագրի ամբողջ ընթացքը:
	Ընդամենը Ա	130.000	
	Ծրագրային ծախսեր		
2.1	Դասավանդողներ	595.200	Ներկայացված ծրագրի կարևորագույն հիմնասյուն է հանդիսանում կինոարվեստի ոլորտում մեծ փորձ ունեցող 2 առաջատար մասնագետների ներգրավումը, որոնք իրականացնելու են իրենց գործունեությունը ըստ նախապես համաձայնեցրած ժամանակացույցի, «Սցենարիստ», «Ռեժիսոր», «Մոնտաժի ռեժիսոր» մասնագիտություններով: Յուրաքանչյուր մասնագետ աշխատելու է 2 ամիս՝ բոլոր ընտրված մասնակիցների հետ,
2.2	PR և ընդհանուր գովազդային արշավ՝ SMM ծառայությունների մատուցում (Facebook, Instagram)	300.000	Ծրագրի կարևորագույն բաղադրիչն է հանդիսանում նաև Ծրագրի ընթացքում իրականացվող հետևողական աշխատանքներ ուղղված Ծրագրի հանրահռչակմանը. տարածմանը համացանցի, մամուլի միջոցով, SMM (Social Media Managment) սոցիալական կայքերի պաշտոնական էջերի վարում (Facebook, Instagram):
2.3	Կինոդպրոցի շահառուների ավարտական միասնական տեսաֆիլմի պատրաստում /տևողությունը՝20-28 րոպե/	1.147.860	Ծրագրի շահառուները մասնագիտությունները սովորելուն պես համատեղ նկարահանելու են մեկ միասնական ֆիլմ:

2.4	Ավարտողների վկայագրերի պատաստում	39.000	Ծրագրի ավարտից հետո մասնակիցներին տրվելու է մասնակցության վկայագրեր:
2.5	Մասնակիցների համար նոթատետրի պատրաստում	37940	Նոթատետրը մասնակիցների համար կծառայի դասընթացի համար գրառումներ կատարելու համար:
	Ընդամենը Բ	2.250.000	
	Ընդամենը ԱԱՀ	450.000	
	Ընդամենը	2.700.000	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032472, ՀՎՀՀ 02698732
Պատվիրատուի ստորագրությունը
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
Վահրամ Գասպարյան
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

«Արմֆիլմ Ինդուստրի Դեվելոպմենտ մշակութային հիմնադրամ»
ՀՀ ք. Երևան, Արշակունյաց 5
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822119731001, ՀՎՀՀ 2693936
Հեռ. (055) 189-475
afidfoundation@gmail.com
Կատարողի ստորագրությունը
հիմնադրամնի տնօրենի ժ/պ ՝
Հմայակ Ալեքսանյան
Կ. Տ.